բը, որին մասնակցում էին և Բաղուի ղարաբաղցիների ներկայացուցիչներն ու Ադրբէջանի կառավարութեան ներկայացուցիչ Ռուստամբէգովը։ Օրակարգի հարցն էր՝ Ադրբէջանի իշխանութեան ճանաչումը։ Սուլթանովը կանչուած էր Բաղու. անդլիացիք էլ ներկայացուցիչ չէին ուղարկել։ Այդ պատճառով համագումարը ընտրեց 3 հոգինոց մի մարմին — Ռուբէն Շահ-նազարեան, Արամայիս Տէր-Դանիէլեան, Գերասիմ Խաչատրեան — տալով նրան Ղարաբաղի կողմից Ադրբէջանի կառավարութեան հետ բանակցելու լիազօրութիւն և ինքը ցրուեց։

Ընտրուածները մեկնեցին Բաղու՝ տանելով իրենց հետ համաձայնութեան մի նախագիծ։ Ճանապարհին Գեր. Խաչատրեանը սպանուեց Թուրքերի ձեռքով, իսկ միւս երկուսը հասան Բաղու և ղարաբաղցիների հայրենակցական Միութեան ու Ազգ. Խորհրդի հետ խորհրդակցելուց յետոյ՝ բանակցութեան մէջ մտան Ադրբէջանի կառավարութեան ու Սուլթանովի հետ և յանդեցին որոշ համաձայնութեան։

Նախնական համաձայնութիւն կայացնելուց յետոյ, Ղարաբաղի ներկայացուցիչները և Սուլթանովը վերադարձան Ղարաբաղ։ Սուլթանովը արտաքնապէս փոխեց իր վերաբերումը. շատ սիրալիր էր դէպի հայերը և ամէն կերպ աշխատում էր գրաւել նրանց համակրանքը։ Հաստատուեց հայկական թաղում, մի հայի տանը և յայտարարուեց, որ Շուշի—Ելիսաւ ճանապարհը այլևս բաց է, և հայերը ազատ են ճամբորդելու. նրանց գլխից մի մազ իսկ չի ընկնի։ Հայերն էլ, իրենց հերթին, աշխատում էին առիթ չտալ դժգոհութեան ու բարդութիւնների։

Այս երևութական խաղաղութեան տակ, սակայն, կրքերը շարունակում էին եռալ, և երկու կողմերն էլ տենդագին պատրաստութիւնների մէջ էին։ Հայերը պատրաստւում էին 7րդ համագումարին, որը պիտի որոշէր Բաղուում կնքուած համաձայնութեան ճակատագիրը. ղարաբաղցիները պէտք է ասէին, թէ ի՞նչ է իրենց վճիռը՝ ընդունել Ադրբէջանի իշխանութի՞ւնը, թէ չարունակել պայքարը։ Այս հողի վրա սուր տարակարծութիւններ կային քաղաքացիների և գիւղացիների միջև. վերջինները մեղադրում էին քաղաքացիներին, որ նորից դաւաճանել են Ղարաբաղին՝ համաձայնելով համակերպուել Ադրբէջանի պայմաններին։

Միւս կողմից պատրաստութիւններ էր տեսնում և Սուլթանովը. մի կողմից աշխատում էր կողմնակիցներ որսալ հայերի մէջ՝ պառակտելով նրանց, միւս կողմից շտապում էր գրաւել ռազմագիտական կարևոր կէտերը, աւելացնել զօրքերի թիւը, մարգել և ամրացնել նրանց։ Հաւաքում էր սպառնական բռունցք ապդելու համար համագումարի վրա։

Օգոստ. 12-ին, Շոշու գիւղում, բացուեց 7րդ համագումարը։ Սուլթանովը չներկայացաւ նրան և ուղարկեց առաջնորդ Վահան եպ.-ին մի քանի քաղաքացիների հետ։ Համագումարը մերժեց լսել սրանց և մի խիստ բողոք ուղղեց Սուլթանովին՝ Գ. Խաչատրեանի և ուրիշների սպանութեան դէմ։ Ի պատասխան, օգոստ. 14-ին, Սուլթանովը ներկայացրեց համագումարին մի